# «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-143-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 15.1-րդ հոդվածով.

«**Հոդված 15.1. Արտահանվող սննդամթերքի, բուսասանիտարական և անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների արտահանման համար տրվող համապատասխան սերտիֆիկատի կամ հավաստագրի տրամադրման համար վճարի սահմանումը և վճարման կարգը**

1. Լիազոր մարմնի կազմում գործող սահմանային հսկիչ կետի տեսուչը ներմուծող երկրի օրենսդրությանը համապատասխանությունը պարզելու նպատակով սահմանային անցումային կետում զննում է արտահանվող սննդամթերքը, բուսասանիտարական և անասնաբուժական հսկման ենթակա ապրանքները: Համապատասխանության դեպքում արտահանման համար տրամադրում է համապատասխան սերտիֆիկատ կամ հավաստագիր:
2. Արտահանվող սննդամթերքի, բուսասանիտարական և անասնաբուժական հսկման ենթակա ապրանքներիարտահանման նպատակով տրվող յուրաքանչյուր սերտիֆիկատի կամ հավաստագրի տրամադրման համար գանձվում է վճար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:
3. Սահմանված վայրերից և աշխատանքային ժամերից դուրս լիազոր մարմնի կողմից արտահանվող սննդամթերքի, բուսասանիտարական և անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների արտահանման նպատակով տրվող սերտիֆիկատի կամ հավաստագրի տրամադրման

համար տնտեսավարող սուբյեկտից վճարը գանձվում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույքաչափերի կրկնապատիկի չափով:

4. Արտահանվող սննդամթերքի, բուսասանիտարական և անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների արտահանման նպատակով տրվող սերտիֆիկատի կամ հավաստագրի տրամադրման համար գանձման ենթակա գումարը տնտեսավարող սուբյեկտը կամ նրա ներկայացուցիչը փոխանցում կամ վճարում է լիազոր մարմնի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի հատուկ հաշվին, արտահանվող սննդամթերքի, բուսասանիտարական և անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների արտահանման նպատակով տրվող յուրաքանչյուր սերտիֆիկատի կամ հավաստագրի տրամադրումից հետո ` երեք բանկային օրվա ընթացքում:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: